



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ՀՈԳԵԳԱԼՈՒՄ

04 ՅՈՒՆԻՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
«Առաքելոյ Աղաւնոյ»	Էջ 2
Սէր	Էջ 3
Ծանուցումներ	Էջ 4

### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ»

#### ԳԻՐՔԷՆ

(2.1-21)

**Ե**րբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՛նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը

խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադոկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոիւզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրեացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ.-

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովէլի մարգարէութեան որ կ'ըսէ.

... իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ...

«Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ

Երկինքի  
բարձունքին  
վրայ  
հրաշքներ  
պիտի  
ցուցնեմ, եւ  
նշաններ՝  
վարը երկրի  
վրայ.

պիտի ունենան եւ ձեր  
ծերերը երազներ պիտի  
տեսնեն:

Այն օրերուն իմ  
Հոգիս պիտի թափեմ  
նաեւ իմ ծառաներու  
եւ աղախիններու  
վրայ, եւ անոնք եւս  
իմ պատգամներս պիտի

փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ  
հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝  
վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով,  
կրակով ու թանձր ծուխով պիտի  
լեցուի, արեւը պիտի խաւարի եւ  
լուսինը արիւնի գոյն պիտի առնէ,  
եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ  
եւ անեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը  
օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի»:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ  
(14.25-31)**

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
«Այս բոլորը խօսեցայ ձեզի,  
քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց

իմ խաղա-  
ղութիւնս է  
որ կու տամ  
ձեզի, որ այս  
աշխարհի  
տուած  
խաղաղու-  
թեանն  
տարբեր է:

Միւս թարգմանումներով՝ Սուրբ  
Հոգին, որ Հայրը ձեզի  
պիտի զրկէ իմ անունովս,  
ան ձեզի ամէն ինչ պիտի  
սորվեցնէ եւ յիշեցնէ  
ինչ որ ես ձեզի ըսի:  
Խաղաղութիւն կը թողում  
ձեզի. իմ խաղաղութիւնս  
է որ կու տամ ձեզի, որ

այս աշխարհի տուած խաղաղութենէն  
տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք:  
Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա  
կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”:  
Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ  
Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ  
մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան

պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն  
ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի  
չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ  
այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ  
մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը  
պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ  
եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր  
պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք,  
երթանք այստեղէն»:

**«ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱԲՆՈՅ»**

Առաքեալ աղանին մեծաձայն հնչնամբ  
եւ կայծակի փայլատակումին նման  
իջնելով երկինքէն,  
հուրով զինեց անկիզելի աշակերտները,  
մինչ անոնք Ս. Վերնատան մէջ կը նստէին:

Աննիթական եւ անքննելի աղանին,  
որ կը պրպտէ Աստուծոյ խորագոյն  
խորհուրդները,  
զանոնք Հօրմէ ստանալով  
կը պատմէ ահաւոր եւ  
միլսանգամ Գալուստր:  
Չայն Հօր եւ Որդիին համագոյակից  
քարոզեցին:

Օրհնութիւն երկնքին՝  
Հօրմէ բղիտող Ս. Հոգիին,  
որուն շնորհիւ Քրիստոսի արեան  
փոխարկուած անմահական բաժակով  
առաքեալները արբեցան  
եւ մարդկութիւնը երկինք հրախրեցին:

**ՀՈԳԵՆԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈ  
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵԾԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՄ:**

# ՄԷՐ

ԿԱՐՕ ԿԻՍՍՐԿ. ՆՈՒՆՈՒՏԵԱՆ

«... սիրելի՛ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լինան գործադրելը»:  
(Հո 13.10)

Կը մսի՞ս... մինա՞կ ես: Սիրէ՛: Ինձի կ'ըսէ պատուիրանը:

Բայց ինչպէ՞ս սիրել:

Սէրը ունենալու է զգայարան մը... որ միայն որպէս զգացում չի պարփակուիր, այլ գրկելով զայն կ'անդրանցնի ու կը հասնի փորձառութեան տակաւին ամայի ոլորտներ:

Աւետարանը կ'ըսէ. «Սիրէ՛՜ քու ընկերդ քու անձիդ պէս»:

Ընկերս կ'ըսէ զիս սիրէ այնքան որքան ինքզինքդ կը սիրես: Ի՞նչ կը նշանակէ այս:

Ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել այս սէրը անանձնական սիրոյ, որ Յիսուս մեզի օրինակով սորվեցուց խաչին վրայ: Ինչպէ՞ս ինքզինքդ գոհեց աստուածային սիրոյ որպէս արտայայտութիւն: Երկու սէրեր որոնք իրարու հետ մրցակցութեան չեն ելած, այլ որոնք զիրար կ'ամբողջացնեն: Երկու սէրեր որ Յիսուս թելադրեց:

Եթէ նախ ինքզինքս պիտի սիրեմ... կը նշանակէ թէ պիտի ընդունիմ եւ սիրեմ այն անձը որ Աստուած ստեղծած է իր պատկերին համաձայն՝ ստեղծագործութեան մէջ ամենամօտիկը ինձի, որ ես եմ: Իմ արժանապատուութեանս մէջ վերականգնելով է որ Աստուած զիս կը սիրէ: Եւ ինքզինքս սիրելով պարզապէս կ'ընդունիմ իր սէրը եւ զայն կ'արտացոլացնեմ որպէս նառագայթ հայելիին մէջ: Կը վերատիրանամ մէջս իր կանգնած արժանապատուութեան՝ որպէս մարդ արարած, որպէս սիրուած արարած:

Երբ ընկերս կը սիրեմ, այնպէս ինչպէս ինքզինքս կը սիրեմ... սիրոյ այդ շրջանակը կ'ընդլայնեմ ու կը ներարեմ դիմացինս, որ ինչպէս ես՝ ինքն ալ մէկ նառագայթն է միեւնոյն լոյսին: Ինքզինքս ճանչնալով միւսին մէջ, կը ճանչնամ զԱստուած: Որովհետեւ նոյն լոյսին

մէկ այլ նառագայթն եմ: Կը սիրեմ զինք ոչ թէ որովհետեւ ինձմէ ցած է կամ՝ բարձր, այլ որովհետեւ իր արժանապատիւ տարբերութեան մէջ ինձի հաւասար է: Հաւասարութեան մէջ է որ իրարու կը հանդիպինք: Նոյնքան սիրուած միեւնոյն Հօրմէն: Տարբեր, բայց հաւասար: Առանց խտրութեան:

Ինքզինք ճանչնալ, ընդունիլ, սիրել...

Ընկերը ճանչնալ, ընդունիլ, սիրել...

Օղակը ընդլայնել... չվախնալ բաշխուել... քանի վերջ ի վերջոյ սէրը ապրում է եւ կեանք: Սէրը չի կրնար նեղ շրջանակի մէջ մնալ: Պիտի բաշխուի... պիտի մեծնայ... պիտի ամպէ... ու որպէս տեղացող անձրեւ իր շնորհովը պիտի լուսայ զիս, քեզ ու մեզ: Որպէս մարդ, որպէս յաւիտենութեան ճամբորդ:

Աստուած է որ ինքզինք կը սիրէ մարդկութեան ընդմէջէն, մեր ընդմէջէն: Մենք միայն կը մասնակցինք ու կարելի կը դարձնենք կեանքի այդ յորդառատ բաշխումը: Այլապէս կը խամրինք ու կը չորանանք մեր եսակեդրոն չկեանքներուն մէջ:

Կը մսի՞ս... մինա՞կ ես: Սիրէ՛:

## ՀԻՄՆԱԴՆԵՐՈՒՄ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՄ

Բարեհաճեցէք հեռաձայնել

Արժ. Տ. Գառնիկ

Աւ. Քհնյ. Գոյունեանի.

514 909 5203 թիւին:

## ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող  
ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Աւ. Քհնյ.  
Գոյունեանի,  
հեռաձայնելով

Այժմ լեժե՛ք ԵԿԵՂԵՑՈՅԱ ԴԻԱՏԵՏՐԻ ԷՁԸ  
եւ ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՂՏԵՑԵՔ (like).  
[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

**Ս. ՅԱԿՈՒՔ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻԱՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

ԶՕԱ «ՆՈՐ ԾԱՊԻԿ»Ի ՏԱՆԱԿԱԵԱԿԻՆ  
**ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ**  
ԵՐԱԺԻՇ՝ ԱՐԵԳ ԼՈՒԻՍԻԱՆԱ

ԱՌԱՋԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ / ՀԱՄԵՐԳ

ՕՐՀՆՈՒԹԵԱՐ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԲԱՐԳԷԱ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻ**  
ԱՌԱՋԱՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՐ՝  
ՀՕՄԻ ԳԱՆԱՏԱՅԻ ՀՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՐ՝ ՏԻԿ. ՀԱՔԷ ԿԷՕԱՃԵԱՆԻ  
ԵՒ ԱՏՏԱՐՈՎ ԲԱՍՏՐԱՄՃԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻՆ,  
Տ. ԵՒ ՏԻԿ. ԱՐՏԷԱ ՏԵՐԿԻՇԵԱՆԻ, Տ. ԵՒ ՏԻԿ. ՄԱՆՈՒԿ ԶՈՒԽԱՃԵԱՆԻ

ՄԱՏՈՒՅՈՒՄ՝  
Ս. ՅԱԿՈՒՔԻ «ՆՈՐ ԾԱՊԻԿ» ԴԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻՐԻՆ  
ԽԱՐԱՎԱՐ՝ ՏԻԿ. ԷԼԻՍ ՊԻՏՈՒՄԻ-ՀԱՐՊՈՅԵԱՆ  
ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐ՝ ՏԻԿ. ԴԵԼԱՐ ՀԱՐՊՈՅԵԱՆ-ԳԱՅԼՈՅԻԵԱՆ

Ի ԿՊԱՍ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ (ԱՐՅԱՆ) ՀՕՄԻ »ՍՕՍԷ« ԴԱՆԿԱՊԱՐՏԵՁԻՆ

ՀԱՐԱԹ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017-Ի ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՐՔ 7.00-ԻՆ,  
CENTRE ARMÉNIÉ, 1025 Boul. Elizabeth, Laval, H7W 3J7  
ՏՈՍՍԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ,  
ՀԵՌ. 514-331-5445 x 202